

# Ի՞նչ է իրենից ներկայացնում My Health LA ծրագիրը:

- **My Health LA** ծրագիրը՝ դա ԱՆՎՃԱԸ առողջապահական ծրագիր է Լոս Անջելես վարչաշրջանի ցածր եկամուտ ունեցող բնակչության համար, ովքեր բժշկական ապահովագրություն չունեն:
- **My Health LA** -ը մի ծրագիր է, որի անդամները կարող են ստանալ ընթացիկ, բարձրորակ բուժօգնություն համայնքի կլինիկաներում առողջապահական ծառայություններ մատուցողների թիմի կողմից:
- **My Health LA** -ը դա ծրագիր է Վարչաշրջանի անապահով բնակիչների առողջությունը



## Ի՞նչ բուժօգնություն կարող եմ ստանալ **My Health LA** ծրագրի միջոցով:

- **My Health LA**-ի անդամների ստանում են ԱՆՎՃԱԸ հիմնական բուժօգնությունը, որի մեջ մտնում է.
  - ✓ Ընթացիկ առաջնային կանխարգելիչ բուժօգնությունը և առողջապահական վերահսկողությունը
  - ✓ Տեղեկություններ առողջապահության մասին և խորհրդատվություն
  - ✓ Մասնագիտական ծառայություններ Բժշկական ծառայությունների բաժանմունքում (DHS)
  - ✓ Հիվանդանոցային և արտակարգ իրավիճակների օգնություն DHS-ի կլինիկաներում և հիվանդանոցներում
  - ✓ Դեղատոմսով դուրս գրվող դեղորայք
  - ✓ Ալկոհոլի և Թմրանյութերի Չարաշահման դեմ Բուժման Ծառայություններ
  - ✓ Լաբորատոր ծառայություններ և անալիզներ
  - ✓ Այլ նմանատիպ բուժօգնություն
- **My Health LA**-ի անդամները բուժօգնությունը կարող են ստանալ Լոս

## Ո՞վ կարող է դիմել **My Health LA** ծրագրի համար:

**My Health LA**-ն հետևյալ մարդկանց համար է.

- ✓ Ովքեր բնակվում են Լոս Անջելես վարչաշրջանում
- ✓ տարիքը 19 եւ ավելի մեծ
- ✓ Համապատասխանում են եկամտի պահանջներին (տես տեղեկաթերթիկի հետևի կողմը)
- ✓ Չունեն կամ իրավասու չեն բժշկական ապահովագրության համար

**My Health LA** ծրագիրը բժշկական ապահովագրություն ՉԷ—Եթե դուք ունեք բժշկական ապահովագրություն, մի հրաժարվեք դրանից:

Ինչպե՞ս կարող եմ իմանալ, որ ես իրավասու եմ: Որտե՞ղ կարող եմ անդամագրվել:

- Ձանգահարեք անդամների սպասարկման կենտրոն 1-844-744-6452 համարով (MHLA): Անդամների սպասարկման կենտրոնները բաց են ժամը 8:00-ից մինչև 17:00, երկուշաբթիից ուրբաթ:
- Նախապես զանգահարեք ձեր կլինիկա՝ տեսակցություն նշանակելու կամ անդամագրվելու համար: Համոզվեք, որ կլինիկան ընդունում է նոր հիվանդներ: Դիմելը անվճար է:
- Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք [dhs.lacounty.gov/mhla](http://dhs.lacounty.gov/mhla)

## Ի՞նչ արտոնություններ ունի **My Health LA** ծրագիրը:

- **My Health LA** ծրագրի հիմնական նպատակներից մեկը հիվանդին ցուցաբերվող բուժօգնությունն է: Անդամները կարող են ընտրել Medical Home -ի ցանկացած կլինիկա և ստանալ ընթացիկ բուժօգնությունը այդ կլինիկայում ողջ տարվա ընթացքում: **My Health LA** ծրագրի շրջանակներում կարող եք օգտվել ընդամենը մեկ Medical Home-ի կլինիկայից:
  - ✓ Medical Home-ը դա մի կլինիկա է, որտեղ հիվանդները այցելում են առաջնային բուժօգնության բժշկին կամ բուժքրոջը, ով ծանոթ է իրենց հիվանդներին ու լավ տեղեկացված է նրանց բժշկական պատմության մասին:
- **My Health LA** -ի անդամները կարող են ընտրել մեկ Համայնքային կլինիկա և նշանակել իրենց տեսակցությունները այդ կլինիկայում:
- Մի սպասեք մինչև հիվանդանաք, որպեսզի բուժօգնություն ստանաք—դուք կարող եք անվճար պարբերաբար կատարվող ստուգումներ ունենալ և ստանալ կանխարգելիչ բուժօգնություն ձեր բուժկետում:
- Ձեզ կտրամադրվի ID քարտ, որը ցույց կտա, որ դուք **My Health LA** -ի անդամ եք:
- Դուք կարող եք զանգահարել անվճար հեռախոսահամարով Անդամների սպասարկման կենտրոն ժամը 8:00-ից մինչև 17:00, երկուշաբթիից ուրբաթ: Աջակցություն տարբեր լեզուներին տիրապետող գործակալների կողմից:



ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍԻ ՇՐՋԱՆ – ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐ

ՎՃԱՐՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ – ԻՄ

ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆԸ

ԼԱ 138% ԴԱՇՆԱՅԻՆ ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ

ՄԱԿԱՐԴԱԿ (FPL)

(Ուժի մեջ է 2019թ. ապրիլի 1-ից մինչև 2020թ. մարտի 31)

ՏԱՆ ԱՊՐՈՂ ԸՆՏԱՆՔԻ ԱՆԴԱՄՆԵՐ <sup>1</sup>	ԱՍՄԱԿԱՆ ԱՍԲՈՂՋԱԿԱՆ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ԵԿԱՄՈՒՏ <sup>2</sup>
<input type="checkbox"/> 1	1,437 դոլլար կամ պակաս
<input type="checkbox"/> 2	1,945 դոլլար կամ պակաս
<input type="checkbox"/> 3	2,453 դոլլար կամ պակաս
<input type="checkbox"/> 4	2,962 դոլլար կամ պակաս
<input type="checkbox"/> 5	3,470 դոլլար կամ պակաս
<input type="checkbox"/> 6	3,978 դոլլար կամ պակաս
<input type="checkbox"/> 7	4,487 դոլլար կամ պակաս
<input type="checkbox"/> 8	4,995 դոլլար կամ պակաս
<input type="checkbox"/> 9	5,503 դոլլար կամ պակաս
<input type="checkbox"/> 10	6,012 դոլլար կամ պակաս
<input type="checkbox"/> 11	6,520 դոլլար կամ պակաս
<input type="checkbox"/> 12	7,028 դոլլար կամ պակաս

Ավելի քան 12 անդամ

Յուրաքանչյուր հավելյալ անդամի համար ավեացրե՛ք 509 դոլլար

- 
- 1 Ներառե՛ք չճնված երեխային և քաղաքացիական ամուսնուն/կնոջը ընտանիքի կազմում:
  - 2 ՎԲԳ-ի համար բոլոր կրճատումները հանվում են.
    - 90 դոլլար մեկ աշխատող անձի հաշվով
    - Երեխայի խնամք
    - Բժշկական ապահովագրության ծախսեր և
    - Վճարվող ալիմենտ
-